



առ պարզութեա պարզութեա պարզութեա պարզութեա պարզութեա պարզութեա

—  
—  
—

9. *Contra* *adversarios* *de* *rebus* *publicis* *et* *privatis* *et* *de* *rebus* *domesticis* *et* *foreignis*.

**ել սիկ**

*Ել ճիւղը ունի երեք բարբառ.*

## 1. Մարտզայի բարբառ.

## 2. *Խոյի բարբառ.*

### 3. Արթվանի բարբառ

## 1. ՄԱՐԱԴԱՅԻ ԲԱՐԲԱՐ

Մարտազայի բարբառը կը խօսուի Ուրբմիոյ լճին երկու երեսները, արևելիան երեսը կը գտնուի Մարտզա քաղաքը, իսկ արեման երեսը Ուրբմիա բաղաքը՝ իր խումբ մը հայ գիւղերով որոնցմէ մաս մը թրքախօս է: Այս խիստ հետաքրքիր բարբառին վրայ ոչ ուսումնասիրութիւն և ոչ տող մ'իսկ բնագիր հրատապակուած է: Պարակասատան ևզած ժամանակս ուսումնասիրեցի զայն՝ Մարտզացի երկու հասուն աշտկերաներուս հետ (ՊՊ, Պետրոս Հայրապետեան և Գրիգոր Մնացականիան): Այս անտիպ ուսումնասիրութեան համառօտութիւնն է որ կը ներկայացնիմ հուտ

Մարտակայի բարբառնին ձայնական գրութիւնը շատ հարուստ է ձայնաւորներու և երկբարբառներու կողմէ (ընդ ամէնը 13 հատ). ահա ասոնց շարքը:

*ut, m, p, ḩ, b, o, ḫo, mu, ḫu, ṽb, nub, ṽz, nuž;*

Բաղաձայնները նոյնպէս հարաստցած են քանի մը նոր ձայններով. թ, պ, փ, գ, կ, զ, գյ, կյ, թյ, դ, ծ, ծ, ց, ճ, ճ, չ, զ, ժ, ս, շ, ը, բ, ու, լ, վ, ւ, ֆ, խ, դ, ն, ն, ն, մ, ն.

Այս ձայներուն մէջ տռանձին բացատրաթիւն արժանի են՝ որ կը ներկայացնէ սուսական և ձայնը, պահինքն խուլ և գոց արտասանուած ը. ըի, ուի, ըէ, ուէ կը ներկայացնեն մօտառ-բապէս ըի, ուի, ըէ, ուէ ձայները՝ արտագ արտասանուած։ Բաղա-ձայնները՝ ինչպէս կը տեսնուի, ունին Յ աստիճան (թրթռուն, խուլ և թաւ). բարբառո կը ճանչնայ նաև զյ, կյ, ըյ, նյ քմա-կանները և լ կիսաձայնը՝ որ ունի անգլիական Ա գրին արտա-սանութիւնը։

Զայնական փոփոխութեանց մէջ նկատելի են.

$U > U_{\mu\eta}$ , we find

$b > j\zeta$  (*միավոնկ բառերու սկիզբը*),  $\zeta$  (*բաղմավանկ բառ սկզբու սկիզբը*),  $j$   $\zeta$   $b$ ,  $j\zeta$

*ի > է, էե, ը. օր. գարի՝ կյորը, գղիր՝ տըպըեր.*

*Ո > վլի (բառերուն սկիզբը). ինչ. ոսպ՝ վլիսպ, որպի՝ վլիքը՝ են. բառերու մարմայն մէջ կը գառնայ օ, էօ, ըե, ուէ, ուե մասնաւոր պայմաններու համաձայն. օր. գործ՝ կուերծ, խոռ՝ խուժտ, հոդ՝ խուչը, հոգի՝ խօթը՝ զրորել՝ կյիւլէօրէլ, եպիսկոպուս՝ յըպըսկապըս են:*

*Ու > ու, ուե, իւ. ինչ. ջուր՝ ճիւր, տուն՝ տիւն, խուրձ՝ խուբը:*

*Այ > է. ինչ. հայր՝ իւէր, ձայն՝ ծէն:*

*իւ > իւ, ի. ինչ. հարիւր՝ խորիր, ձիւն՝ ծիւն:*

*Ոյ > իւ, ուե. ինչ. լոյս՝ լուս, քուն՝ ըյին:*

*Բաղաձայններուն փոփոխութիւնը ճիշտ նոյն է Վանսայ կամ Կարաբաղի բարբառին հետ. Դ գարձած է միշտ իւ:*

*Քերականութեան մէջ ամէն ինչ հիմնուած է նմանութեան օրէնքին վրայ. անուանական ու բայական մասնիկներն ու վերջաւորութիւնները կը փոփոխեն իրենց ձայնաւորը՝ բառին պարունակած արմատական ձայնաւորներուն համեմատ: Օրինակի համար որոշեալ յօդը կ'ըլլայ ա՛ եթէ բառին վերջավանկին ձայնաւորը ա կամ ու է. բայց կը դառնայ ո՛ եթէ նոյն ձայնաւորը ու, է կամ իւ ըլլայ: Սեռականին մասնիկն է ը՛ եթէ բառին վերջավանկին ձայնաւորը ա կամ ը ըլլայ: բայց նոյն մասնիկը կ'ըրլայ իւ եթէ ձայնաւորը իւ կամ էօ է. դարձեալ ու կըլլայ՝ ու, օ ձայններուն առջե, ի կ'ըլլայ՝ ի ձայնաւորին առջեւ են: Մինչև իսկ էական բայց ենթակայ է այս նմանողական ձայնափոխութեանց: Յոգնակիին մասնիկներն են իր՝ միտավանկ բառերու համար, նիր՝ ձայնաւորով վերջացող բազմավանկ բառերու համար: Հուլովման մէջ ձայնաւորի անկում կամ սղում գոյութիւն չունի. քիթի՝ քիթի, մսի՝ միսի, սրաի՝ սիրտի: Բարբառիս ճանչցած հուլովներն են՝ ուղ., սեռ.-ար, հայց., բաց. և գործ. ներկոյականը գոյութիւն չունի հոս, հայցականը Ում ճիւղին նման է. իսկ բացառականը կը կազմուի էն մասնիկով:*

*Ինչպէս վերը ըսած ենք, ել ճիւղին մէջ ներկային բունը կը կազմուի բային անորոշ ժամանակէն՝ անոր կցելով կամ հետը խոնարհելով օժանդակ բայց. Մարբաղայի բարբառով կըտուի օր. իւզէլի իմ՝ կամ իւզէլիմ՝ փոխանակ ըսելու կուզեմ՝ ուզում եմ՝*

(կամիմ), կը մասնիկը կը գործածուի միայն ապառնիխն մէջ։ Ամէն անցեալ ժամանակ կը կազմուի ներկային վրայ աւելցներով կը մասնիկը՝ առանց դէմքի և թուի խտրութեան։ Կատարեալի համար հնարուած է նոր ձեւ մը։

Ահաւափկ ուղեմ (կը նշանակէ սիրեմ) բային ամբողջական խոն խոնարհումը.

Ներկ.

Յար. Բ.

Անց. ապ.

իւզէլիմ	իւզած իմ	կիւզիւմ էր
իւզէլիս	» իս	կիւզիս էր
իւզէլի	» լ	կիւզէր
իւզէլինքյ	» ինքյ	կիւզինքյ էր
իւզէլէքյ	» էքյ	կիւզէքյ էր
իւզէլին	» ին	կիւզին էր

Անկատար

Գերակ. Ա.

Յարդ առկ.

իւզէլիմ էր	իւզիր իմ էր	իւզօլու իմ
իւզէլիս էր	» իս էր	» իս
իւզէլէր	» էր	»
իւզէլինքյ էր	» ինքյ էր	» ինքյ
իւզէլէքյ էր	» էքյ էր	» էքյ
իւզէլին էր	» ին էր	» ին

Կատար.

Գերակ. Բ.

Անցեալ

իւզում	իւզած իմ էր	իւզօլու իմ էր
իւզիր	» իս էր	» իս էր
իւզից	» էր	» էր
իւզունքյ	» ինքյ էր	» ինքյ էր
իւզուքյ	» էքյ էր	» էքյ էր
իւզուն	» ին էր	» ին էր

Յար. Ա.

Ապառ.

Հրամ.

իւզիր իմ	կիւզիւմ	իւզիւ
» իս	կիւզիս	մի իւզիւ
» էր	կիւզիւ	իւզէր
» ինքյ	կիւզինքյ	մի իւզէքյ
» էքյ	կիւզէքյ	
» ին	կիւզին	

**Ստոր.****Անց.**

իւզիւմ	իւզիւմ էր
իւզիս	իւզիս էր
իւզիւ	իւզէր
իւզինքյ	իւզինքյ էր
իւզէրյ	իւզէրյ էր
իւզին	իւզին էր

Ուրմիոյ հնթարտրառը Մարաղայի հետ նոյն է. բայց յաջորդ  
նմոյշէն կերեայ որ ինչ ինչ տարբերութիւններ կան. օրինակի  
համար յոպնակիի էր, նէր մասնիկը, որ Մարաղայի մէջ իր, նիր  
ձեն ունի: Ապառնին կը կաղմուի տիկլյի մասնիկով՝ որ անշուշտ  
պիտիլն մէկ ձեափոխութիւնն է: Շատ հետաքրքիր է ստացա-  
կան յօդի գործածութիւնը բայցերուն հետ. ինչ. մէ ծի պընչնըտ  
(մի ծի բանհնը քեզ համար), փոտուէս էրդ (քեզ կը փնտոէր).  
առակն առէլի--նա՛ շատ բախցը յէլ ոտէնդ, նաշատ թառ յէլ  
թալէնդ (ասակը կըսէ. ոչ շատ բաղցը եղիր, ոտեն քեզ, ոչ շատ  
դառն եղիր՝ նետեն քեզ): Ստացական յօդի այս գործածութիւնը  
պարոկականէն փոխառեալ է, ուր կըսուի. օր. զիմետ և տիսայ  
քեզ», Յինեւ եւ «կը տեսնեմ քեզ» են:

**ՆՄՈՑՇՆԵՐ****ՄԱՐԱՂԱՅԻ ԲԱՐԲԱՌԵՆ****1. Մարաղայէն**

Խառնիս ինոն նիշան.

Մէ օր Սօնան ինոն Անդաւնու կիւզիւն իւրիւս (իւրիւնց)՝  
աղային փասկըին: Սօնան կասը՝ Անդունին.

— Յոր, էլչի օղօրկիհյ Հորթիւնիւ ախչկան իւզօլոււ:

— Զէ, Սօնա, մէ Էօզգոմնոտ իսիյալ տրտ. հոլըրթ նորտ չու-  
տուրուն. էն հարուս, յիս ախչատ:

— Զէ, Անդուն, իշքան իսիյալ տնէլիմ, նորմէն աղէկյու  
չիմնուլի զյիննէլ էսս (հէնց) յիս առէլիմ «էթահյ նորտ իւզիհյ.  
յա կըտան, յա չին տա»:

— Դէ մըկա քյի էտէնց ի, լաճիքյիրիս (մեր տղան) էլ իւզէլի, շոպպաթ ծրա էլշի օդօրկու, թօղ էթոն իւզիւն:

Շոպպաթ օրա Սօնան շուտօվ կի զորթնի, սիմավարա քի քիցի, չայբըրտ քը խըմին, աննաւն (յետոյ) Սօնան կըլը' կէթուր բացու տնանա, Միրվարիյին կասը' քյի'

— Այ Միրվարը', մխչի. յէրէկյ իրիկաս (ամուսնոյս) խէտտ մէ զա՞ղ ինյ իսիյալ տրի. իւզէլինյ Հորթիւնիւ ախչկան առնինյ միր Միսակին. կիւզիս յոր կօօրէն սօրա քյէլ էլշի, տըսնինքյ թշ կասին. կան ոյտոր, կյուլ շոպպաթ էթոնքյ նիշանս ալնինյ:

— Սօնա, մըկա քյի էտէնց ի, յիս էլ շատ կուրախանսամ քյի Միսակին փոակէլինյ, Աշկիս վիրոն, Սօնա, կօօրէն սօրա կէթոմ քըչարչըրվիմ, բո՞լըյու տանիմ:

Կօօրէն սօրա Միրվարին կըլը' կէթու Հորթիւնիւս տնանա, նոր ախչկան իւզօլու:

Կէթու տնանա քըթըփը', կիւյտն տնանա կըպտցին, Միրվարին կըմըննը' նիս, Հորթիւնիւ կնոգան պարօվ կըտա, Հորթիւնիւ կնիկյ Նորկիղն էլտ նոր պարօվա կառնը.

— Փոհ, պարօվ իս էկյի, Միրվարը' բաջի, էթ վո՞ր քաշմին ի քյէզի պէրի տո, աղէկյ ի, հորտոն մէ կյուլիս միր տո՞ւնա:

— Զէ, նո՞րգիկ բաջը', մկա էլ չիմ էր կյու, ամնա մէ խէլյր պտնը խամտ յիմ էկյի:

— Ասա տանինյ, թշ խէլյր պտնի խամտ իս էկյի,

— Նո՞րգյիզ բաջի, աղէյ, թօղ ասիմ. տիս, զիւլ ու էկյիր իմ ծիր Նորգառին էլշի, կտոս՝ տու, չիս տա՞ մի տու:

— Միրվարը' բաջը', յիս չիմ ասէլի չիմ տա, ամմա, իրիկյիս տնանա չի. թօ քիշիրտ իրիկյիս կյու, նորմէն խորտոր առնիմ, տանիմ թշ կասը':

Միրվարին կասը' Նորգյիղին.

— Ամմա խայիշտ իմ տնէլի քյի ասիս. բոլքու կյուլ շոպպաթ նշանս աբնինյ, ըիյօլ (մի կիրպ) սօրա-յէլ խառնիստ տնինյ:

— Արինէյին յիւ, Միրվարը բաջը, յիս կասիմ:

Միրվարին յէլալ էկավ տուն,

Քիշիրվան Նարգյիղի մարթա էկավ տուն. Նարգյիղու ասաց իւր մարթուն.

— Միրվարին էկիր էր միր ախճկան էլշի, ինչօխ իս տնէլի. կըտաս ոյտոր, վո՞լու կյուլուց ջուղար տամ:

**Մարթա տոսաց.**

— Ասված շինուխավիր տնի, Միսակա խէլքյօվ տղայը.  
կտամ. վա՛զու Միլվաբին կյուլուց աստ կտահյ։

Նորվողու Միրվաբին էկավ նորդիկի կը՛շտա, ասաց —  
Տալէհյ։

Նորդիկին էլ ասաց.

— Կտահյ, հէր չին տա, Մարթըս տիւն էթուէն սօրա է-  
կավ, ասր' մ. էն էլ ասաց կտամ։

Կյիրտկյի ծրա Սօնան, Միլվարի ինուն Անդրեան կինոցը՝  
շիրինիյ խմօլու. շիրինիյ լամէւն իրիքը շոպպաթ սօրա հազրը-  
վան խառնիսի թողորիհյ տըսնօլու. Խառնիսի թողորիթյոտ  
տանէլէն սօրա, բաշլամըշըն խառնիսու. ըմբին մարթնիբին  
կանչըն, խառնիսի խորտը տուվըն: Պառչին քյիշիրտ խինոտ  
տիրըն, սօրավան քյիշիրն էլու փամկա կըսըն: Փամկա կուղուց  
խորտթին էր քիցէլի խառնու կուղճխա. բույօլում (յիտոյ) առէ-  
լին էր «Ասվա շինուխավիր տնի»։

Խառնուն ժամտունէն խառնէլէն սօրա Անգուն ինուն Սօնան  
խաղալօվ խառնուն պէրըն տուն։

## 2. Ուրմիոյ ենթաբարբառէն \*)

## Իրիաղաջ զիւղէն

Մէ օր գնացիմ խասամ գետի յէրդա. մէ պծառ կակուղ իմ  
էր քէլէլի (մի քիչ հանդարա կերթայի). գնտա էնէնց ջօշմիշիր  
էր՝ յէրզէրէն թալէս էր ճիւրա. իշկացիմ տըսամ մէ տէրտէր՝  
ուր տէրօխնին, մէ կաշա (ասորի քահանա)՝ ուր տէրօխնին, մէ  
մալլա էլ՝ ուր կնիկա. մէյն էլ մէ ծի կար կշտէրա: Նա՛ տէրտէրա  
էլթիբար էր անէլի տանց մօ՛տա մնալ ուր կնիկա, նա կաշան,  
նա մալլան: Մէ ծի կա տանց մօ՛տա, վէր տիկյի (պիտի) տար-  
մօվ ճուկստ ճուկստ ըսնին մէկյէլ իրէսա: Մըկը (հիմակ) թշիօ  
տնինք վէր կնթնէրա չը մնան օտար մարթու մօ՛տա:

## Բառլու զիւղէն

Մալլա նասրադինա մէ օր իշիրա խառիկ էր տէմա՛ էթաս  
էր: Կյըննաց ըլավ կյատիւկի (ձոր) վօ՛տա. մէ մտրթ տար տէմ

\*) Հաղորդեց պլ. Դալուստ Խոքէնդէրէան՝ դաւառական տեսուչ Ուրմիոյ  
պպրոցներու.

առէց, ասաց, տիւն զյինաս յէս յէփ կմէռնէմ, ասա տըսնիմ: Տէփ (յետոյ) էն իշկաց էտ մարթա մի թահար մարթ ի, յէտնար—տէփ ասաց, էշա կյատիւկէն ըլէլիւն տիկյի օխտ տիր տսի. խէտ օխտ տիր տէկց՝ տէփ էն վակիտին տիւն կմէռնէս: Խա, տէփ էշէրա կշէց կյատիւկա. գլօ՛խա ըլէլիւն օխտ տիր էշա տէկց: Մալլան ինկյավ պարզվավ, ասաց. յէս մէռամ: Տէփ մնաց տաղա. էշէրա հոր մէկյա մէ թէլս կյընացին. մէ կյէլ ըկավ տաղ՝ էշէրէն մէկյա կյէրավ. ասաց. Մալլա նասրադինա չմէռնէր՝ մը-կը կյէրա էշա չէր ուզը՛: Տէփ մալլան ըլավ էկավ թէլս տունա. իւր կնկյան ասաց. յէլ քէլ տուր արկյէցին ասա վէր մալլան մէռիր ի, տանինք խօրինք իւրա: Ըլավ կյըննաց տուր ու տըր-կյէցին կանչէց, տարան տասա (զգա) խօրին: Ասաց. մէ էրթիս թօդ, դոն բո զո ընձի խաց պէ թալ. մնաց էտ մարթա տաղ: Տարմէն յէտի մէ կաթըրիսանա էկավ, տար կյէրէզմանը կուշտէն ընսնէսէն էր. էն օրն էլ տար կյընիկա, մա՛սալա, իւշ էր խաց պէրի. կլէօ՛խու էն ծակէն պտնցրացուց (յանի իշկաս էր հա) իշկամ խաց պէրից: Կաթըրքէրա խոնան, պէռն էլ չինի աման էր. տառնհը մամմէն տվին կօտուտին. տէփ էն կաթըրշինէրա փտուտին էն տէղա, ասին մէ իշկանք՝ տանք ինչչն խոնան. իշկացին մէ կյէրէզմանը վրտ մէ էրթըրը պէս ծայ կու: Տէփ բունտ արին (ուզեցին) մէ զէն մէ փէտ պարզէն. տէփ փէտա պարզին, ը՛՛, տէփ էն զէն ծէն տըլից մալլան կյէրէզմանը՝ մէչէն. շատ մի պարզէքյ, կը կըպնը աշկյիս. տէփ տանք ասին. հօ՛ հօ՛, կտ չկա դէտ (այդ տեղէն) էն խոնէ (խրտներ). զէտ կլօխա խանիր ի... քակին տարա, խանին կաթըրքինէրա. տէփ տարա բունտ արին թըլիէլ. շատ թըլիըն, էնզըգը թըլիըն իւր...

## 2. ԽՈՅԻ ԲԱՐԲԱԴ

Խոյի բարբառը ընդարձակ տարածութիւն ունի. նա կը  
բռնէ ոչ միայն Խոյի, Սալմաստի և Մակուի գաւառները Պարս-  
կաստանի մէջ, այլ և Ռուսաստանի մէջ իգդիր և Նախիջևան։  
**1828-ի** պարսկահայոց մեծ զարթականութեան ժամանակ Սալ-  
մաստի հայոցմէ շատեր և կան հոստատուեցան Դարաբազ, ուր  
հիմնեցին Կորի, Ալիզալի, Մուզզանջուղ, Քարաշէն գիւղերը Զան-  
կեզուրի գաւառին մէջ և Ալիլու, Անգեղակով, Ղուշչի-Թաղաքէնդ,  
Ուզ, Մազրա, Բալակ, Շաղատ, Լծէն, Քարաբլիսա և Ներքին-  
Քարաբլիսա գիւղերը Սիսիանի գաւառին մէջ։

Խոյի բարբառը առավելասիրուած չէ տակաւին. Դոյն բարբառով գրութիւններ կան Եմինեան Ազգագր. Ժողովածուին մէջ՝ հա. Բ. էջ 300—304 և Դ. էջ 343—350։ Աւելի կարևոր են Ն. Տէր-Աւետիքեանի՝ «Ռատանաւոր աշխատութիւններ և Նշանադրութիւն. Պարսկաստանից գաղթած Խոյնցւոց բարբառով» (Վաղարշապատ, 1900), և «Բանաստեղծութիւններ և Կիբակոսի հարսանիքը» (Վաղարշապատ, 1903):

Այս հատուածներուն քննութեամբ կերեայ որ Խոյի բար-  
բառը կը բռնէ միջին գիրք մը Մարզայի և Վանի բարբառնե-  
րուն մէջտեղ: Իր քերականական կազմութիւնը նոյն է Մարտ-  
դայի բարբառին հետ, բայց ձայնաբանութեան օրէնքները Վանայ  
բարբառին նման են. ուրիշ խօսքով Խոյի բարբառը աւելի մօտիկ  
է գրաբար հայերէնին քան Մարզադն:

Աւելորդ համարելով ծանրանալ այս արդէն պարզուած հ-  
րեոյթներուն վրայ, ընթերցողը կուղարկենք յաջորդ նմուշին:

## ՆՄՈՑԵ

Խոյի բարբառէն \*)

— Այ մառթ, տիւ գինաս որ խետ ախչիդյա ճոչացավ, մառթի էժալու խասավ. անշնա չի սրփի, չի ավըլի, ամանչամանա չի լվա, տուսմէրքյա կեխտու կը թօղնի. շատ էլ որ խետը իյնիս, դաստէ կզարկի կը կստափի, յանի ինչ՞—իմանան որ տանելու խասիր ի, ինչնց էլ տղան. հալա մէ յէլ քէլ մտի վայան (գոմ)՝ տես, ինչ կտանաս. էն հէյվան քյալերա, գյամէշքերա, կովերա ընչիւկ վզերա թաղվիր են կվի մէջա. տիւ հէնց գինաս որ Կիրակնաս մէզի խմա պմն ի անէլի՝ մեր տհնաս ավըրեր ի. վայ վայի որ տաես «ա՛յ բալամ, էտէնց չեն տնի», յէտ ի դառնալի խինդ խայիր քյաշում (յիշոց) ի տալի. ասէլի «Ալլահ վարա (Աստուած տայ) զըմէն էլ խատնեն». յանի ինչ ի, իմացէք որ յէս էլ վասարվէլու խասիր էմ. կօ էտէնց, այ մառթ. մկա տիւ գինաս:

— Աշկըս լըս. մենք վասայվանք՝ մեր կլօխա յեղոտավ, թող էն էլ վասայիի, բալքի մեղուտի. էն հալա յէրէյվան քյօրիսան ի. մկալուստ սարաք ըլենք, մէ անծոտ պուճուճակ ախչիկ էլ դար խմա ուզինք, խամլստ մեզի ինչ կասեն. չեն ասի «յանի Քտ ինչ դայրա էր՝ մկալուստ մելսկի տոպլամկա կախին էն խեղճ տղայի վզէն». յէս դալամ կանեմ դարա սաքաք չեմ ըլի. դար պէրնէն հալա կաթի խոս ի իկյալի:

(Կիրակոսը կ'աղաչէ մօրը):

— Նանս ջան. էնը խօքուտ դուրբա՞ն նանա. տիւ իմ աղէկյա ասա բարայիս կնւշտա. տավարն էլ կպախեմ, տան զըմէն պտնի վրան էլ սիրտ կը ցավցուցեմ. հէնց էն դրդայի որ՝ մէ դայրիմ կպնես բարայիս յախան, որ մէ խա ասի, քոլ ի. ամա էտ էլ քեզի տաեմ որ Ղուլիենց Շահբաղի ախչիկ Նիդյարէն սավայի՝ որ վիզս կոէք՝ ճոկ մառթու ախչիկ չեմ առնի հա:

(Մայրը կը համոզէ ամուսինը, որ կը պատասխանէ).

— Այ՛ կնիկ, չունքի որ ասէս ես, թող քյօ խաթըն էլ խօշ ըլի. բալքի սաղ չմացինք մեռանք, սաղ իջյան Կիրակոսին վստկինք, յէս ինսան տիւ էլ դհօլ զուլնայով մէ աղէկ քէֆ անենք,

\*) Տես Ն. Տէս-Աւետիքեանի, Ուտանաւոր աշխատութիւններ և նշանադրութիւն, էջ 46—49.

զիւլաշ կպնենք. ջանեա՛մա. գտրմէն յէտ բնչ կը լի՛ թող ըլի. ամա տիւ էտ ասա, վիր ախշիկյա ուզենք, որ համ արտուռվ ըլի, համ դայրաթով. խօսորթի ըլի, որ մեր մատէն փուշ խանիւ (Ներս կը մտնէ Կիրակոսը): Կիրակոս, ա՛յ բալամ, նահատ առէլի որ քեզի փսակենք, մեղա տիւ. ի՞նչ ևս աօիլի. ուզեն ևս թէ չէ. յա վիր ախշ չին ևս ուզելի. մէ ազվարթա ասա լշկամ. էլ ամչընաւու վախտը չիւ:

— Յես չեմ ուզելի փսայվել նահատ ի՛ որ կպիր ի յախասա, քշերցերէկ ասէլի՝ «տկի (պիտի) քեզի փսակենք». մկա տիւ, գինաս, նահատ, յիս էթաս եմ փայտա՛ տավարին յէմ տամ, համա, նահատ, էն ասածս ի հա, Նիվյարա:

— Չեսնալի, Դուլիհնց Շահբաղի ախչկա խետն ի, ընձի ասիս ի. «կուզէք էն ի, չէք ուզի՝ կլեմ կլուս կվերցեմ» անէն կէթամ. իմ ուզածա Նիվյարն ի, Նիվյարա:

— Ի՞շխօ մայար Շահբաղին էնէնց խասած ախչիկ ունիր Մենք ուշպար մառթ ենք, մեր տան ջանէ՛լա տկի մէ պզտա (քիչ մը) էլ ծիռով-ոտով ըլի, պանի մէչ էփած ըլի, կանոսի մեր տան պանտ, տաշտի քժա՛րա (քաղճան) տիւս կիկյա. էնէնց ըլի որ ինկերէ, արկեցէ յէտ չմնանք: Շատ խարսներ տաիր եմ, որ իրկը վեկէն կլուսքենրա տնես են պտուղա, ընչանք լս խռալով մոփես են. չէն ասէլի, ախար սափորքերա տարսակ ի, ճուր տկի պիրենք, ավել տկի անենք, տննա, թիւչան զբիլի ձեռէն ըլիր ի իշխօ փողնցա. տսնմս ես էն Յարթենէնց խարսա, մառթու դար պէսս մէ խարս ըլի, թող մէ աշկն էլ կոր ըլի:

### 3. ԱՐԹՎԻՆԻ ԲԱՐԲԱՐ

\* Արդուին (կամ Արթվին) քաղաքն ու գաւառը կը գտնուին Բաթումէն դէպի հարաւ. այս գաւառն ունի երկու գաւառակ՝ Արտանուշ և Շաւաշթ-Իմերլսէվ. Արդուին քաղաքն ունի 1200 տուն հայ բնակիչ, որմէ 230 լուսաւորչական և մատցեալլ կաթողիկ Արդուին հայ գիւղ չունի իր շրջակայքը. Արտանուշ աւանն ունի միայն 200 տուն կաթողիկ հայ. Արտանուշ գաւառակին մէջ կան հատեեալ հայ գիւղերը.

1. Տանձուտ, բն. 110 տուն հայ և 5 տուն կաթոլիկ.
  2. Նորացէն, բն. 22 » »
  - Շաշէթիմէրխէվ գաւառակին հայ գիւղերնեն. 1. Մաթլիլ (բն. 65 տ. կթլ. 17 տ. հայ), 2. Մամանէլիս (12 տ. կթլ.)
  3. Օքսուակեռ (160 տ. հայ), 4. Գեւեռն (25 տ. կթլ.)

Արտասնուշչին դէպի արևելք կը գտնուի Արտահան, իսկ դէպի հարաւ. Օթի:

Այս քարբառին վրայ ոչ մէկ ուսումնասիրութիւն և ոչ տող  
մը բնագիր կայ հրատարակուած, ուստի յաջորդ առղերը իմ անձ-  
նական հետազօտութիւնս արդիւնքն են՝ Բաթումի մէջ քաղուած  
գաղթական Արթվինցիներէ:

Սրբուինի բարբառին ձայնական դրութիւնը Թիֆլիսի  
բարբառին նման է. կը ճանչնայ բաղաձայններուն երեք ասուի-  
ճանները. այ երկբարբառը կը վերածուի Է-ի. ինչ էս՝ այս, էզ՝  
այդ, էն՝ այն, էլ՝ այլ, էծ՝ այժ, էզի՝ այգի: «Համար» բառը դար-  
ձած է Թիֆլիսից նման համաւ Շատ հետաքրքիր երևոյթ մ'է  
վ ձայնին անկումը «վերայ» բառին մէջ, որ դարձած է րա. ինչ.  
քարի րա քարի վերայ, ծիու րա նատա՛ ծիու վրայ նստայ, ծա-

ոի ըստ վեր անցավ՝ ծառը բարձրացաւ. չ ձայնը լս-ի չի վերածուիր՝ հակառակ Մարտաղյի և Խոյի բարբառներուն:

Հոլովման մէջ բացառականի մասնիկն է մէն. ինչ. Արթվինումէն, Սավէթումէն, նէտնէմէն, ասիկա՝ ինչպէս գիտենք՝ Թիֆլիսի բարբառին յատկանիշներէն մէկն է: Նոյնպէս է նաև յոդ. սես. Էրու ձեր. ինչ. ծառէրու, ծիէրու ևն: Ներգոյականի ում ձեր սովորական է. մէշում, օրում:

Բայերու խոնարհումը Թիֆլիսէն կը տարբերի. Ներկայի ում մասնիկը խսպառ գոյութիւն չունի. այս ժամանակը ըստ Խոյի բարբառին կը կազմուի ելիս, ելի ձեռվ. ինչ: Խօսէլիս էմ, փնտոէլիս է, ըլնէլի է՝ մինչ, չէմ կամ չէմ կայի էրթլի՝ չեմ կրնար երթաւ վօ՞րտի էս էրթլի՝ մւր կերթաս, չէմ կայի խօսէլի՝ չեմ կրնար խօսիլ Ապառնին կը կազմուի կու մասնիկով. օր. կու աշին, կու դուս գա, կու փնտուին ևն: Թէ կտուարեալին և թէ ապառնիին մէջ և ձայնաւորը կը դառնայի. օր. աշից, փնտոից, կու աշին ևն: Առանձնապէս հնատաքրքիր ձե մ'է հրամայականի երկրորդ տեսակը. ինչ. զրի՞ս ա, խօսի՞ս ա, որ կը համապատասխանէ Պօլսոյ չզըս՞ս (գրէ), չխօսի՞ս (խօսէ) հարցականաձե հրամայականներուն:

### ՆՄՈՅՇ

#### Արթվինի բարբառէն

Առաջ Արթվին շէնլիկը տաճնըհինդ առուն է էղէ. բօլորը մէշու. էն մէշումը Սավէթումէն կու աշին օրը (որ) Արթվինումէն մուխ կու դուս գա. գուզան կու փնտուին խիտը (վրաց. կամուրջ). չէն կա (չեն կրնար) գտնի օրա ծօրօխը անցնին. էտէդ մէկ ավջին գէյիզի հէտնէմէն գալիս է օրը զարնէ. առաջէվան կայը է ըլնէլի. կայը էղած վախտին փնտոէլիս է վժրանց գնաց: Աշից օրս խիտը գտավ. խիտն էլ փուրցէլը (վրց. մացառ թէ բաղեղ) փաթըթած է. էնողաղուր արագ օրա խիտը անցավ էնթին. Վէր անցավ օրմընումը, փնտոից ու շէնլիկի տէղը գտաւ: Իշտէ էնդօր էտէվ, էֆէնդիմ, օրմանը կոտրէցին, էնդէղը քաղաք շինէցին, իշտէ էնդէղը էղագ Արթվին:

Էն գտնօղ մարթու անունն էլ Արութէն է էղէ, էնդօր վրա դրէլ է Արթվին: